«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԱՌԱՐԿԱ-ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ-Մարինե Նիկողոսյան

ՄԱՐԶ-Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ- «Հովտաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն---------- 3
2. Գլուխ առաջին. Արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված նպատակներն ու խնդիրները հայ գրողների ստեղծագործություններն ուսուցանելիս---------- 5
3. Գլուխ երկրորդ. Արժեքային համակարգի ձևավորման նպատակներն ու խնդիրները Հ. Շիրազի բանաստեղծություններն անցնելիս---------- 9
4. Արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված դասի պլան---------- 16
5. Եզրակացություն---------- 20
6. Գրականության ցանկ---------- 22

Ներածություն

Ինչ չես անի թրով, սրով,,

Ձեռք կբերես քաղցր խոսքով….

Արժեք, արժեքային համակարգ, կարևոր երևույթ, որի նշանակությունն ու օգտակարությունը սահմանված չէ բնության կողմից: Արժեքը հիմնվում է որոշակի գործողությունների ժամանակ տրված սուբյեկտիվ գնահատականների վրա, որոնք մտնում են հասարակական ոլորտի մեջ:

Արժեհամակարգը կողմնորոշիչ դեր ունի մարդու առարկայական և սոցիալական իրականության մեջ, որը նրա պրակտիկ վերաբերմունքն է շրջապատող առարկաների և երևույթների հանդեպ:

Արժեքներ կարող են համարվել՝ սերը, ընտանիքը, հոգևոր արժեքները, կրոնը և այլն:

«Արժեք» հասկացությունը մենք շատ ենք օգտագործում նաև երեխաների կրթության մասին խոսելիս:

Ի վերջո, փորձենք ձևակերպել, թե ի՞նչ է արժեքը. երևույթ, որի դիմաց գին ենք վճարել (հույզերի, հարազատների,հայրենիքի, հայրենի հողի կորուստ):

Արժեքը պետք է վերապրել, զգալ, գիտակցել, քանի որ հեշտությամբ հնարավոր չէ ստանալ այն: Իսկ կյանքն առնաց արժեքների դատարկ է: Երբ մարդն ապրում է հեշտ, առանց կորուստների, պայքարի, այդ կյանքն երբեք չի երջանկացնում, որովհետև չի բերում արժեքների ձևավորման:

Արժեքների մեծ մասը սնվում է էթնիկական նորմերից, որոնք տարբեր են քաղաքում և գյուղում: Դրա համար բարոյական է համարվում այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը, չի հակասում դրանց: Երբ փլուզվում են արժեքները, մարդու կյանքը կորցնում է իմաստի մեծ մասը, սկսում են մեկը մեկին կոտրել, վիրավորել, վիճել միմյանց հետ և այլն: Դրա համար շատ կարևոր է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի այն օրինակելի

տարածքը, ուր հաստատուն են մնում բարոյական նորմերը, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար. Նա պետք է զգա և՛ ցավ, և՛ ուրախություն, ունենա թե՛ հաղթանակներ, թե՛ դժվարություններ:

Յուրաքանչյուր առարկա դասավանդելիս պետք է կարողանալ ճիշտ մոտեցումներով բացահայտել տվյալ առարկայի մեջ թաքնված արժեհամակարգերը:

Հայ գրականություն առարկան դասավանդելիս ուսուցիչը պետք է կարողանա շատ հստակ ու նուրբ մոտեցումներով բացահայտել ներկայացվող արժեհամակարգերը: Դասավանդումը պետք է կազմակերպել այնպես, որ **սովորողը կարողանա ինքնուրույն վեր հանել տվյալ գեղարվեստական ստեղծագործության մեջ առկա արժեքները:**

Գրական ստեղծագործություններում վեր հանող **արժեքներից են՝ սերը, ընտանիքը, ծնողը, հայրենիքը, արյան գնով ձեռք բերված հայրենի հողը:**

Արժեհամակարգերի ձևավորման ընթացքում պետք է կարողանալ ճիշտ մոտեցումներով երեխայի հոգին հարստացնել, ներշնչել առաքինի վարքագծի իդեալներ, միաժամանակ ցույց տալ գրականության ճանաչողական արժեքը:

Բոլոր ժամանակներում էլ գրականությունը մնում է հայ կյանքի ու ժողովրդական բաղձանքների արտահայտիչը: Հետևաբար, պետք է հստակ ձևակերպել այն, որ գրականությանը տրված արժևորումները էական նշանակություն ունեն ոչ միայն մեզ, այլև գալիք սերնդի համար:

Ուրեմն, երբ մեր այս աշխատանքում խոսում ենք գրականություն առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ ազգային արժեքների դրսևորումները մեր գրողների ստեղծագործություններում՝ թե՛ ընդհանուր, թե՛ առանձնացված օրինակներով:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼԻՍ

Ընթերցանությունը մի զբոսախնջույք է, որին մասնակցելու համար հեղինակը բերում է բառեր, իսկ ընթերցողը՝ գաղափար:

Գրականությունն ու մշակույթը անցել են զարգացման տարբեր շրջափուլեր: Ժողովրդի կյանքում կատարված փոփոխություններն իրենց ուրույն ազդեցությունն են թողել թե՛ գրականության, թե՛ մշակույթի զարգացման գործում:

V դարից սկսած հայ գրականությունն անցել է զարգացման տարբեր շրջափուլեր: Յուրաքանչյուր շրջափուլ իր մեջ պարունակում է ժողովրդի համար կարևոր նշանակություն ունեցող ազգային արժեքներ:

Հետազոտական աշխատանքում վեր են հանվելու գրողների ստեղծագործություններում ներկայացվող ազգային այն արժեքները, որոնք դաստիարակում են՝ **հայրենասիրություն, ժողովրդականություն, հավատարմություն, նվիրվածություն:**

Հետազոտական աշխատանքում փորձելու ենք ներկայացնել այն խնդիրներն ու նպատակները, որոնք դրվելու են մեր առջև հայ գրականություն առարկայի դասավանդման ընթացքում առկա արժեքային համակարգերի բացահայտմանը:

Մենք գիտենք, որ գրականությունը համարվում է արվեստների մայրը, իսկ հայ գրականություն ստեղծող հայ գրողն ազգային արժեքների, ազգային ճշմարտության կրողն է, ժողովրդի հերոսական ոգու կրողը, ում ապրած կյանքն ուսանելի է մնում իր շատ կողմերով թե՛ ուսուցչի, թե՛ աշակերտի համար:

Նպատակը, ասենք հայրենասիրական քնարերգության ուսուցման ընթացքում դառնում է մի կողմից՝ ազգային ավանդույթներին անդրադարձը, մյուս կողմից՝

ազգայինի յուրահատկությունների բացահայտումը: Ո՞րն է ազգայինը գրականության մեջ. այս հարցն արժանանում է տարբեր պատասխանների:

Արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված նպատակներից և խնդիրներից հետևյալներն առավել կարևոր տարրերից են:

Նպատակը- նպաստել ստեղծագործելու ընդունակության ձևավորման կարևոր՝ համեմատելու միջոցով նոր գիտելիք ձեռք բերելու, այն սահմանելու, հետազոտելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Նպատակը, աշակերտների կողմից որևէ դասանյութ հետազոտելու ընթացքում, դրա յուրացումն ապահովվի բարձր մակարդակով:

Եվ ընդհանրապես ցանկացած գործունեությամ մեջ առկա է սովորելը:

Խնդիրը պետք է լինի աշակերտի կողմից ոչ թե դասանյութի ուղղակի ընթերցումը, այլ այն, որ սովորողը ձգտի հաղթահարել կարդալու ընթացքում նկատած հակասությունները, գտնի իրեն անհանգստացնող հարցերի պատասխանները և այլն:

Խնդիր-փոխկապակցված գործունեության ժամանակ ստեղծված իրադրության մեջ աշակերտը հանդիպի հակասությունների, փորձի ինչ-որ փոփոխություններ կատարել, ընդգրկվի ինքնակամ գործունեության մեջ:

Արդյունքում ձևավորվելու է որոշակի արժեհամակարգերով զարգացող անձ և խնդիրների մինչ այդ չուներ:

Նպատակը միաժամանակ նպաստում է գիտելիքի, ուսուցման գործընթացի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը, գաղափարների, տեսակետերի, անձնական որակների, ինքնագնահատման, ինքնուրույնության ձևավորմանը:

Նպատակներն ունեն նաև **զարգացնող** բովանդակություն և իրենց հերթին նպաստում են՝ էմոցիոնալ զարգացմանը, խոսքի զարգացմանը, երկխոսության, ինքնուրույն եզրահանգումներ կատարելու ընդունակության զարգացմանը:

Խնդիրը. ուսուցումը կազմակերպել այնպես, որ աշակերտը որպես սեփական խնդիր: Այս դեպքում արդեն սովորողի գործողությունները աստիճանաբար դառնում են նպատակաուղղված և նպատակադրված, աշակերտի մոտ առաջանում է պահանջ՝ լրացուցիչ գիտելիք ստանալու:

Հետազոտության ընթացքում գնալով ավելի հստակ է դառնում այն փաստը, որ նպատակը արդյունավետ կլինի այն դեպքում միայն, եթե ուսուցիչը իր ամեն մի քայլը պլանավորելով է իրականացնում իր աշխատանքը:

Սա էլ խոսում է ուսուցչի նպատակների և աշակերտների առջև դրված խնդիրների իրականացմանն ուղղված համատեղ գործունեության արդյունավետության մասին:

Արժեհամակարգերի դրսևորումները հայ գրողների ստեղծագործություններում

Ուսումնասիրելով հայ գրականությունն ու հայ գրողների թողած ժառանգությունը, հասկանում ենք, որ նրանք եղել են ազգացավ, ազգի համար մտահոգ և վաղվա օրվա մասին խորհող մտավորականներ:

Ո՞րն է հայ գրականության ազգային յուրահատկությունը, բնորոշ հատկանիշը:

Հայրենասիրական քնարերգության առանձնահատկությունն է դառնում մի կողմից՝ **անդրադարձն ազգային ավանդույթներին, մյուս կողմից՝ ազգային յուրահատկությունների բացահայտմանը:**

Ո՞րն է ազգայինը գրականության մեջ հարցն ունի տարբեր պատասխաններ: Այս տեսակետից ազգայինն արդիականության մեջ, նոր իրականության, նոր չափումների մեջ տեսնելու պահանջ են դնում Սևակն ու Էմինը, մյուսները՝ Սահյան, Շիրազ, հակվում են ավելի ավանդական արժեքներին:

Սովորողների մեջ պետք է սերմանել առավել արժեքավորը՝ հայրենասիրություն: Աշակերտը պիտի գիտակցի, որ հայրենիքի սերը աներկրորդ է՝ չի փոխվում, չի անհետանում: Ինչպես Սևակն է ասում «Հայրենիք» բանաստեղծության մեջ.

Ախ իմ հայրենիք

Ինձ կոչ են անում կյանքդ ճանաչել,-

Ավելորդ ձգտում.

Ես մասն եմ կյանքիդ…

«Հայրենասիրությունը հայ գրողի մոտ հանդես է գալիս ոչ որպես սոսկական մի զգացում, այլ որպես աշխարհհայացք, որպես գաղափարախոսություն»,- ասել է Պ. Սևակը: Այս միտքը լիակատար դրսևորում է Սևակի ամբողջ պոեզիայում:

Հայրենասիրական պոեզիան բարձրանում է մի նոր աստիճանի Մահարու ստեղխագործություններում:

Շիրազը ողջ կյանքում գովեգել է Մասիս և Սևան: Նրա «կարոտ» գազելը, «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ» տողի հաճախակի կրկնությամբ, ազգայինի նկատմամբ տածած մեծ ու անկեղծ սիրո ապացույցն է:

Նշանավոր են՝ Շիրազի «Քնար Հայաստանի» գիրքը (1958), Սահյանի «Նաիրյան դալար բարդի», Սևակի «Անլռելի զանգակատուն» և այլն:

Շիրազի փառքն ու հռչակը այս հարցում նրանից առաջ էին ընկել, որովհետև նա մշտապես բորբոք պահեց ժողովրդի հայրենասիրական տրամադրությունները: Նա ապավինում էր ժողովրդի սիրուն, և դրա համար ո՛չ ժողովուրդը դավաճանեց իրեն, ո՛չ ինքը ժողովրդին: Շիրազը ինքը՝ որպես անհատականություն, դարձավ հայրենասիրության խորհրդանշան ու երևույթ: Նրա ազգային բանաստեղծություններն ընթերցելիս թվում է, թե կարդացողի ձայնի հետ հավասար հնչում են մեծ բանաստեղծի, հայրենասերի մաքուր ձայնի ելևէջները:

Ժողովուրդը հպարտանում էր նրա ներկայությամբ: «Իմ գրական ուսուցիչը եղել է և է ժողովուրդը»,- ասում էր Շիրազը:

Սովորողն ինքը պետք է գիտակցի, որ Շիրազի՝ մեծ հայրենասերի սիրտը պատկանում է ժողովրդին: («Հողեղեն եմ առանց երգ, ես երգով եմ հրեղեն», ՍԳ, 1971թ 6, էջ 17-18):

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ Հ.ՇԻՐԱԶԻ ԲԱՆՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑՆԵԼԻՍ

…Շիրազը իրավացի է, որ Արարատը կերգե…
մեծ գործ կենե իր այդ ձգտումով ամբողջ
աշխարհի հայերերուն համար….

Վիլյամ Սարոյան

Հ. Շիրազը ժողովրդական բանաստեղծ է, «Հայաստանի ամենամասսայական, ամենաժողովրդական»[1] պոետը:

«Ժողովրդականության մասին խոսելիս պետք է հաշվի առնել մի քանի չափանիշ, դարաշրջանի էական հարցերին ժողովրդի տեսանկյունից մոտենալու կարողություն, ազգային բնավորության լավագույն կողմերի մարմնավորում…»:[2]

Շիրազը բանաստեղծի կոչումը տեսնում է ժողովրդին ծառայելու, ժողովրդի հոգու և սրտի թարգմանը լինելու մեջ. «Թե ուզում ես անմահ մնալ, ժողովրդիդ սիրտը դարձիր…»: Շիրազն իր ժողովրդի ապրելու նախապայմանը տեսնում էր ժողովրդականին, ազգայինին ապավինելու մեջ:

Գրականության ազգային լինելն արտահայտվում է թե՛ նյութի ընտրության, թե՛ բնավորությունների կերտման և թե՛ երևույթներին ազգային մոտեցում ու գնահատական տալու մեջ: Իսկ քանի որ ազգայինը և ժողովրդականը փոխկապակցված են, ապա ժողովրդի շահերն ու խնդիրներն են պայմանավորում ազգային բնավորության լավագույն կողմերը, որն էլ ստեղծագործության համար ժողովրդային, համազգային նշանակություն ապահովող կողմերից մեկն է:

[1] Շիրազ, Երկեր, 5 հատորով, Ե.,1981-1986, հ. 2, էջ 342
[2] Է. Ջրբաշյան, գրականության տեսություն, Ե., 1972, էջ 63

Շիրազն անընդհատ **պեղել է ժողովրդի հոգու գանձերը, սովորել նրանից, մշակել, բյուրեղացրել** և կրկին **վերադարձրել ժողովրդին:** «…Մարդիկ մեծանում են մեծերի հետ գործ ունենալով, իսկ ամենամեծը ժողովուրդն է, բոլոր մեծ ստեղծագործողները աշակերտներ են անմահ մեծ ժողովրդի…»:[3]

Ժողովրդական երգերի ոճով, ոգով և ազգային երանգավորմամբ ստեղծված գործեր են՝ «Արազ, մինչև ծով կերթաս…», «Վերն ալագյազ», «Ու՞ր ես մալոզ իմ Վանա ծով» «Սիամանթո և Խջեզարե» և այլն:

Աշակերտը պետք է հասկանա, որ Շիրազի մտածողության հարազատությունը ժողովրդական մտածողությունը պայմանավորված է մանկության տարիների տպավորություններով: Ինչպես Ս. Ալաբաբյանն է ասել. «Մաղթանքներ, աղոթքներ, առակ, զրուցներ,-ժողովրդական մտածողության հարուստ շտեմարան էր այն միջավայրը, ուր Շիրազն իր գրական կենսագրությունն էր սկսում…»[4]

Ազգային արժեքների ձևավորումը Շիրազի ստեղծագործություններում բացահայտվում է միաժամանակ գեղարվեստական պատկերավորման միջոցներով: Օրինակ՝ Շիրազը կիրառում է **Վերհուշը** համեմատության եզրեր տեսնելով իր և երկրի, ազգի բախտի մեջ: Եվ ստանալով Շիրազը նեղ անձնական ապրումներից անցնում է կատարում դեպի ազգայինի, ժողովրդականին:

Եվ հրաշք է, որ կամ

Շատ նման եմ մի բուռ երկրիս,

Քանի անգամ բախտը դժկամ՝

Խեղդել կուզեր չոքած կրծքիս... (1.7-8)

Սովորողների մեջ ձևավորվում են հետևյալ արժեքները՝ հնամենի ժողովրդի հույսերը, կարոտներ, գեղեցիկի, բարու, արդարի հաղթանակի հավատը.

---

[3] Հ.Շիրազ, Մի փետուր իմ արծիվ կյանքից, էջ 96:
[4] Ս. Աղաբաբյան Դեպի աղբյուրը լույսի, Ե. 1979, էջ 218

Ճամփա տվեք իմ հույսի սուրբ նշխարին,

Շղթան փշրեմ.... աչքալույս տամ աշխարհին,

Մեծը՝ փոքրին, ծովը գետակ ուլ չտա,-

Վեր սոխակվեմ հայոց լեզվով մարգարյա...

Երեխաների տարիքային առանձնահատկություններին առավել համապատասխան են նշված ստեղծագործությունները, որոնց շնորհիվ սովորողի մեջ ձևավորվում են մի շարք արժեքներ. «Ա՜խ, մանկություն իմ քաղցած», «Հապա ես ու՞ր եմ, մանուկս ասաց», «Քանի որ իմ մեջ ենք ես, խիղճն ու Աստված»:

Ազգային մտածողության հրաշալի նմուշ է «Բիբլիական» պոեմ: Այն չունի նախերգանք, վերջերգ, սակայն կա երկու տող, որով սովորողը դաստիարակվում է դիմանալ ցավին. «Ցավը տվեց սարերին, Սարերը չտարան... Ցավը տվեց մարդուն, Մարդը տարավ»: Սա **աշակերտին սովորեցնում է**, որ պետք է ունենալ **հարատևելու կամք ու վճռականություն, ուժ, ապրելու, արարելու, հաղթելու** վճռականություն:

Ուսուցանումը սկսվում է այսպես .

Ուսուցիչ-Շիրազի պոեզիան ներծծված է ժողովրդի բառ ու բանով, լեզվամտածողությամբ: Սիրելի՛ աշակերտներ, մենք պետք է գիտակցենք այն, որ Շիրազը ժողովրդակ ընդհանուրի մեջ խտացնում է նաև առանձին անհատական արժեքային համակարգեր. **տուն, օջախ, մայր, մանկական հիշողություններ, խրճիթ, մոր ձեռքերի ծանոթ, ջերմ ու տաք զգացողություն:**

Անհույս իմ տան հույս ձեռքեր...

Մեր օջախը վառ պահող

...Մեր խրճիթը սուր տաճար՝

Ազգային արժեքների ձևավորման յուրօրինակ արտահայտությունն է դիտարկվում Շիրազի չափածոյում հանդես եկող ազգային խոսք ու զրույցի կիրառությունը, ժողովրդական առածներ, թևավոր խոսքեր, բարեմաղթանքներ, օրհնանքներ, ազգային ավանդույթներին, սովորույթներին վերաբերող այլ միավորներ, որոնք իրենց մեջ ամփոփում են անմահ ժողովրդի կենսափորձը: «Պտուղը ծառից հեռու չի ընկնի»,«Թե աղջկա սրտով լինի՝ երդիկից էլ դուրս կգա», « Կատուն առյուծի վրա կհաչէ» և այլն սովորեցնում են հենց վերը նշված ազգայինի տարրերը:

Արժեհամակարգերի խտացումները առավել ակնհայտ են դրսևորվում **հոր** և **մոր խոսքերում:** «Թե մորս մտքերն հավքեր դառնային՝ // Կլցվեր աշխարհն աղավնիներով», «Մայրս մարմնացած աղոթք է մի պարզ, // « Քեզ համար աշխարհ, որ խաղաղ մնաս», «Արհեստ սովորիր մի լինիր նազուկ», «Սարով գնա բալիկս, ոչ թե կյանքի մութ ձորով....// Որ արևին նմանվես, ոչ թե մթան լուսնյակին».... և այսպես անթիվ խրատներ, խորհուրդներ, որոնցով աշակերտը կարողանում է, ինչու չէ, նաև ըմբռնել կյանքի խորը կենսափիլիսոփայությունը:

Շիրազի հայրենասիրական երգերը պարզ են ու անմիջական: Հայրենիքը նրանց մեջ հնչում է բոլորովին այլ ձևով: Բանաստեղծը բազմաթիվ թելերով կապված է հայրենիքի հետ, նրանից անբաժան է:

Քնարական հերոսի և հայրենիքի միասնության գաղափարը լավ է արտահայտվում «Իմ սուրբ հայրենիք» ոտանավորում.

Իմ սու՛րբ հայրենիք, դու սրտիս մեջ ես,

Դու սրտիս մեջ ես, ոչ լեզվիս վրա,

Իմ սրտի միջից՝ թե սիրտս ճեղքես՝

Դրոշիդ բոցը պիտի հուրհրա:

Երեխան միանգամից տեսնում է և գիտակցում հայրենիքի և ժողովրդի միասնության հարցը: «Ո՞րն է բաբո, մեր հայրենիք»-ում հայրենիքը բարձր երկինքն է, Սևանը, ճերմակ Մասիսը, հին բերդերը, ավերակ վանքերը: Միայն այս թվարկումը արդեն իսկ սովորեցնում և արմատավորում է երեխաների մեջ մի քանի արժեհամակարգեր, ազգային արժեքներ: Ժողովուրդն ու բնօրրանը ներկայացվում են որպես անբաժանելի միասնություն:

Իր նշանավոր «Էքսպրոմտ»-ում Շիրազը վեր է հանում **հայրենիքի անպարտելիության գաղափարը:** Հաղթանակի նկատմամբ անսասան հավատ. սա է ոտանավորի գաղափարական (առանցքը) իմաստը:

Ազգային արժեքներից մարդասիրություն կոչվածը զուգակցվում է հայրենասիրության հետ Շիրազի նշված ստեղծագործությունում: Աշակերտը քնարական հերոսի մոտ տեսնում է մարդկանց երջանկացնելու, աշխարհը գեղեցկացնելու և այլ բարի ցանկություններ՝ ընդհանուրի մեջ տեսնելով նաև սեփական երջանկությունը: Այս տեսակետից աչքի է ընկնում «թագադրումը».

Գարնան թագավոր ինձ թագադրեմ ,

Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ,

Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,

Որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ,

Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն,

Որ գարունները գան ու չգնան....

Այս բարության տրամադրությունների հետ մեկտեղ Շիրազը սովորեցնում է նաև զգոնություն, ժողովրդի թշնամու նկատմամբ անհուն ատելություն:

Մի՞թե սրտով է հայոց Աստծու,

Որ հայ չթողնի հայամարտ երկրում,

Եվ դեռ անպատիժ ոսոխն է բերկրում,

Էլ հայ չմնաց երկրում հայահոծ,

Էլ հայ չմնաց Ակնում հայահոծ,

Որ հայ չմնաց հայահոծ Վանում,

Էլ հայ չթողին Սասնում հայահոծ

Այժմ էլ ինչպե՞ս մեղքի կոկորդից հայը չբռնի...

Այս տրամադրություններն են իշխում «Հայոց Դանթեական»-ում: Սակայն վերևում նշված չարության, վրեժի և ատելության զգացումները Շիրազի մոտ երբեք չեն վերածվում ատելության սովորական հասարակ և արդար ժողովրդի նկատմամբ, ովքեր ունակ են նայելու արդարության աչքերին, թեկուզ լինի թշնամի, ով սակայն ևս դեմ է արյան և կռվի:

Տարաբնույթ են ազգային արժեքները Շիրազի ստեղծագործություններում:

Մանկություն, մարդասիրություն, անձնվեր սեր հայրենիքի նկատմամբ, ժողովրդական խոսք ու զրույց, ծնողական խորհուրդներ, հույս, հավատ, սեր, հաղթելու անվարան գիտակցություն, ինչու չէ նաև ատելություն թշնամու նկատմամբ, ով կփորձի ձեռք բարձրացնել մեր ազգի վրա:

Շիրազը շատ է օգտագործում յոթ թիվը, որը կապվում է աստվածային Սուրբ էության հետ. «Յոթը որդով սեղան նստես», «Ով մեկի տեղակ յոթն ունի այժմ, նրա՛ն երանի,// Յոթը ոսկե սյուն հայրենի մի տան....», «Մայրս յոթը թոռ դայլայլեց՝ չքվեց ահի հուրն անգամ» և այլն: Այլ տրամաբանությամբ նաև մաշտոցյան այբուբենում «է» տառին համապատասխանում է 7 թիվը:

Սովորողը վարպետություն կտեսնի նաև ժողովրդական բանաստեղծական լեզվին բնորոշ հնչյունային ձայնագործիքավորման հարցում: Ժողովրդական խաղիկներին, տաղերին, այլ բանահյուսական ստեղծագործություններին հատուկ այս երևույթը Շիրազի մոտ դրսևորվում է մտքի, զգացմունքի, ձայնի համահունչ ամբողջականությամբ. «Իմ անհիժելի հուշ-մշուշներում», «Հուշերի հաշիշ իմ գիշերներում»// «Դու մշտաշշուկ, շղարշով հուշ ես...»:

Ազգային բանարվեստին բնորոշ այս հատկանիշն ընդգծում է տվյալ բառի կամ տողի նշանակությունը, հուզականություն և երաժշտականություն է հաղորդում խոսքին.

Մեզ էն գլխից են զարկել, բայց նորեն

Հայերն ապրել են, ապրում են, կապրեն,

Հազար դարեր են զարկել, բայց նորեն

Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:

Եղեռնազարկ էլ եղանք, բայց նորեն

Հայերն ապրել են, ապրում են, կապրեն,

Ով էլ որ զարկի, ինչքան էլ զարկեն,

Հայերն ապրել են, ապրում են, կապրեն...

Շիրազը ցույց է տալիս ժողովրդական լեզվի առատությունը.«Ինչպես կաղնի ծառը սկսվում է հողից, այնպես էլ պոեզիան սկսվում է հայրենի խրճիթից»[5],-նշում է Շիրազը:

Այսպիսով՝ ազգայինի ձևավորումը Շիրազի պոեզիայում և ողջ ստեղծագործությունում անգնահատելի ուսուցողական արժեք ունի յուրաքանչյուր աշակերտի կամար: Շիրազն իր ապրած կյանքով դարձավ իր ժողովրդի, ազգի երազների

[5] Հ.Հովնաթան, Զրույցներ, «Վարք», 1992, էջ 13

ու կարոտների, չբարձրացրած բողոքի ու պահանջի խիզախ մարտիկը՝ հաստատելով այն միտքը, որ «անմահ են բնաբուխ, ժողովրդաբուխ բանաստեղծները»[6]:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ուսումնական գործընթացի ճիշտ ապահովում է ծրագրային ցանկացած նյութի արդյունավետ ուսուցման գործընթացը: Սրան եթե ավելանա նաև ժամանակակից մեթոդների ու հնարների նպատակահարմար ընտրությունն ու կիրառությունը, ապա ուսուցման գործընթացը ավելի լավ կյուրացվի սովորողների կողմից: Ուսուցիչը հստակ գիտակցելու է իր դասի նպատակները, մշակելու է դրանց հասնելու դյուրին և մատչելի ուղիներ, միջոցներ, հնարներ:

Միջին դպրոցում ուսուցիչը զարգացնում է աշակերտների ոչ միայն արտահայտիչ, այլև ընթերցծն ըմբռնելու, նյութն ինքնուրույն հոտազոտելու, վերլուծելու կարողությունները: Այս ամենին կօգնեն՝ մասնագիտական խոր և կայունգիտելիքները, ուսուցման գործընթացի ժամանակակից ռազմավարության մշակումը, սովորել սովորեցնելու նախապայմանը և այլն:

Փորձենք նշված մոտեցումների ու պահանջների շրջանում ներկայացնել Հ. Շիրազի « Հայ ժողովրդի երգերը» / Վերելք/ բանաստեղծությունը / 2 դասաժամ/:

Առարկան- Հայ գրականություն

Դասարանը – 7-րդ

Նյութը- Հ. Շիրազ, «**Հայ ժողովրդի երգերը**»

Տեսակը- նոր նյութի հաղորդման դաս

Ամիս, ամսաթիվ-19.09.2022թ

[6] Հ. Շիրազ, Մի փետուր իմ արծիվ կյանքից էջ 42

Տևողությունը- 45 րոպե

Նպատակը- հայրենասիրություն, ազգային դաստիարակություն

Առաջին ժամ

Դասի նպատակները - Աշակերտները անգիր կսովորեն գործը, կընկալեն գաղափարը, լեզվառճական առանձնահատկությունները, ձեռք կբերեն քնարական հերոսին բնութագրելու, նրա արարքների հոգեբանական շարժառիթները մեկնաբանելու կարողություններ և հմտություններ, կարժևորեն հայ ժողովրդի՝ կյանքի դժվարությունները հաղթահարելու մեծ կամք, վեր ձգտելու գաղափար:

Խնդիրները - լուռ և բարձրաձայն ընթերցանություն, բովանդակության վերարտադրություն, բնութագրական աշխատանք, գրառումներ կատարելու փորձ:

Դասի ընթացքում կիրառվող մեքոդներ և հնարներ- կրկնակի գրառումների օրագիր, կենսագրական բանաստեղծությկուն, հեղինակի աթոռ:

Ուսուցման նյութեր ու պարագաներ- Շիրազի դիմանակար, գրքերը, դասագրքեր, աշխատանքայիտետրեր, ասույթներ, բանաստեղծություններ:

Դասի ընթացքը: **Խթանման փուլ:**

Ուսուցիչն ընթերցում է մեծերի կարծիքներից Շիրազի մասին. « Նա անկրկնելի էպոեզիայի աշխարհում: Ինքնատիպ ու յուրօրինակ, մեծ նխոր՝ ինչպես մարդկայիններաշխարհը, պայծառ ու բեղուն՝Ինչպես տաղանդավոր հայ ժողովրդի ներկան ու վաղվա օրը»:

Քայլ 1. Կրածիքների փոխանակումից հետո ուսուցիչն ուղղորդում է աշախերտներին, ընթերցում է Շիրազի «Հայ ժողովրդի երգերը» և պահանջում տպավորությունները լրացնել առաջարկվող աղյուսակում:

Իմաստի ընկալման փուլ: Քայլ 2. Ուսուցիչը հրահանգում է լուռ կարդալ բանաստեղծությունը: Ավարտից հետո խնդրում է պատասխանել՝ ի՞նչ առնչություն են տեսնում բանաստեղծի կենսագրության և ընթերցվածի միջև հարցերին:

Քայլ 3. Կարծիքների փոխանակումից հետո կազմակերպում է ընտրովի ընթերցանություն՝ հետևյալ հարցադրումներով՝ ի՞նչ ճանապարհ է ընտրել քնարական հերոսը, ինչպես է անցնում այդ ճանապարհը, ի՞նչն է նրան առաջ մղում, հաղթանակի համար ներշնչում, ի՞նչ տրամադրությամբ է հակված հերոսը:

Քայլ 4. Ուսուցչի հրահանգով աշակերտները զույգերով կիրառում են «Կրկնակի գրառումների օրագիր» մեթոդը, տետրի էջը բաժանում են երկու մասի: Մի կողմում դուրս են գրում մի հատված, որն ուժեղ տպավորություն է թողնում նրանց վրա, բնութագրում քանրական հերոսին, մյուս կողմումնշում են , թե ու՞մ կամ ի՞նչ հիշեցրեց այդ հատվածը:Զուգերը նստում են հեղինակի աթոռին և ներկայացնում աշխատանքը: Յուրաքանչյուր աշխատանքի ստուգումից հետո ուսուցիչը գնահատում է աշակերտներին:

Քայլ 5. Հնաձնարարվում է բարձրաձայն ընթերցել՝ մեկնաբանվող ամեն մի տողը:

Կշռադատման փուլ: Աշակերտները մտածում են աղյուսակում նշված հարցերի շուրջ:

Կատրվում է գնահատումը հետևյալ կերպ: Հայշվի են առնվում մի քանի առանձնահատկություններ.

- չափածո երգի անսխալ ընթերցում
- հնչերանգի պապանում
- վերլուծական կարողություն
- ինքնուրույն եզրահանգումներ
- դիմացինին լսելու կարողություն
- հանդուրժուրժողականության դրսևորում
- ազգային արժեքների վերհանում

Հանձնարարվում է տնային՝ կարդալ, վերլուծել, լրացուցիչ կարդալ նմանատիպ հայրենասիրական բանաստեղծություններ՝ընդհանրություններ գտնել պատկերվող ժամանակաշրջանի և իրենց ապրած ժամանակների միջև:

Երկրորդ ժամի նպատակը- աշակերտներն անգիր կսովորեն, կվերլուծեն բնագրի պատկերային համակարգը, ձեռք կբերեն համագործակցային հմտություններ:

Դասի ընթացքը: կատարվում է տեքստային աշխատանք: Սեփական և գրքի բառերով բովանդակության վերարտադրում, համեմատում և բնութագրում կերպարների, կարողանալ որոշել գլխավոր և երկրորդական գաղափարներ, կարողանալ վերլուծել դեպի վեր ձգտելու մարդու ցանկությունը, կերպարի և սեփական ցանկության համեմատումը: վեր ելնելով անսահմանցանկության մեջ տեսնել մեծ հայրենասերի թաքնված հայրենասիրական ձգտումները՝ հերոսական ություն, անմահություն, անպարտելիություն, կամային որակներ: Ընթերցել նաև Հ. Թումանյանի «Հայոց լեռներում» և Հովհաննիսյանի «Դեպի վեր...» բանաստեղծությունները: դուրս գրել և հաեմատել վերը նշված երեք ստեղծագործություններում առկա նմանությունները: Յուրաքանչյուրն արտահայտում է հայրենասիրության մասին իր անհատական տեսակները:

Հովհաննիսյանի «Դեպի վեր...»	Շիրազի «Հայ ժողովրդի երգերը»	Հ. Թումանյանի «Հայոց լեռներում»
Դեպի վեր, սարն ի վեր...	Ելնում եմ ես սարերն իվեր, Քարեր, սարեր, դարեր ի վեր...	Երկար դարերով գնում ենք դեպ վեր...

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Իսկական գրողը, եթե նույնիս կամենա էլ, չի կարող ըլինել ազգային: Ազգային մեծ գրող է դառնում նա, ով ողնուծուծով հասկանում է, որ ինքը նաև մարդկության զավակն է, ոչ թե միայն որև՝ ազգի»:

(Պարույր Սևակ)

Այսպիսով, սովորողներնհամակարգի ձևավորմանն ուղված հետազոտական այս աշխատանքում ներկայացվեցին այն ընդհանուր նպատակներն ու խնդիրները, որոնք կկիրառվեն ի նպաստ այդ գործունեությանը: ուսուցչի ճիշտ և նպատակաուղղված գործունեության շնորհիվ կարել է հասնել ցանկալի արդյունքների: Սովորողի առաջ բացելով ազգային արժեքները՝ մեր գրողների ստեղծագործությունների շնորհիվ, մենք տեսնում ենք, որ հայ գրողն ու ամբողջ հայ գրականությունը այս և հետգա տասնամյաներկին մի կողմից շրունակում ՝ին նորոգել անցյալի ավանդությունները, մյուս կողմից վառ պահել բական Հայաստանի ոգեղեն ջահերը:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ սովորողների մեջ ազգային արժեքների ձևավորումը շատ կարըոր փուկ է, կարևոր գործընթաց ուսումնական գործունեության ընթացքում:

Ազգային արժեքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր ազգային արժեհամակարգն ունի կարևոր դեր, իսկ դրա պահպանումը ուղիղ համեմատական է մեր ազգի, պետության, պետականության անվտանգության հետ: Այս հարցում դպրոցի և ուսուցչի դերըշատ կարևոր է: Դեռևս դպրոցում աշակերտի մեջ պետք է ձևավորել առավել կարևոր արժեհամակարգի՝ եկեղեցի, մշակույթ, լեզու, ընտանիք և այլն: Այս ամենի ձևավորումը երեխայի մեջ զարգացնում է երեխայի ներդաշնակ հոգեկան աշխարհը, օժտում է երխային մեր ազգի ներկայացուցիչը լինելու ցանկությամբ:

Այսպիսով, հետազոտության ընթացքում շատ հստակ գծերով նշվում են այն նպատակներն ու խնդիրները, որոնք ուղղված են ազգային արժեքների ձևավորմանը: Հատկապես հիմա մեր բոլորի համար օրհասական, ծանր այս իրավիճակում նման

ուսուցումը առավել հատկանշանական է սովորողի մեջ **ազգային ոգու** բացահատման առումով: Կարըոր է որ ցավը սրտում, բայց հարենասերի ոգով ուսուցիչը ուժ պետք է գտնի իր մեջ, այդ նույն ոգին ներարկելու սովորողի մեջ:

Եվ իրոք, մեր այսօրվա աշակերտնելի մեջ թաքնված են վաղվա մեր քաջ զինվորները, որոնք կռվի դաշտում վայրկյան անգամ չեն մտածում իրենց կյանքի մասին: Իսկ այդ ազգային ոգիներեխայի մեջ ձևավորում է դեռևս դպրոցից:

Սովորողը պետք է գիտակցի, որ որքան էլ հայը դառնա ռուս, ամերիկացի, վրացի, այնուամենայնիվ հոգու խորունկ մի շերտում հիշում է իր հայկական ծագման մասին. դա իր այրան մեջ է: Հայաստանը պիտի դառնա ուժեղ , առավել զարգացած ժամանակակից երկիր/ դրան կնպաստի մեր դաստիարակած սերունդը/, որտեղից երբեք չեն հեռանա Արարատի որդիները:

Ազգիյին արժեքներով դաստիարակված սերունդը քաջ գիտակցում է, որ հակառակ պատմության փոթորինկերի ու հողմերի , չպետք է կոտրվել, այլ շարունակել մխրճված պահել արմատները այս դժվար, այս չափազանց դժվար, բայց առասպելական ու երանի հողի մեջ: Այսպիսով սովորողների մեջ ազգային արժեքների ձևավորման մասին հետազոտական աշխատանքի եզրակացությունն ամփոփենք Գարեգին Նժդեհի նշանավոր պատգամով.

> «Աշխատիր առյուծի հետքեր թողնել ցեղիդ պատմության մեջ, և՛ բնավ մի՛ մտածիր այն մասին թե մի օր աղվեսը կարող է իր ապականությունը փռել թողածդ հետքի վրա»

Եվ վերջապես՝ Հայաստանի Հանրապետության բնակիչ հայերս, կանգնած ենք նոր փորձությունների ու մարտահրավերների դիմաց և պետք է շարունակենք տոկալ ու դիմակայել: Այս է մեր երկիրը, և այս է մեր հողը, որտեղ պետք է ապրենք, որ պիտի պահենք, պահպանենք և փոխանցենք մեր ժառանգներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դ. Գասպարյան, Բանք հայոց հայրենիք, Ե. «Հայաստան» հարատարակչություն, 2017թ.

2. Արդիականությունը և մեր գրականության հիմնական խնդիրները, ՍԳ, 1966թ. թիվ 12, էջ 129.Է. Ջրբաշյան Գրականության տեսություն, Ե., 1972թ., էջ 63

3. Հ. Շիրազ, Երկեր 5 հատորով, Ե. 1981-1986թ. հ. 2 , էջ 342

4. Հ. Շիրազ, մի փետուր իմ արծիվ կյանքից, Ե. 1983թ. , էջ 264

5. Ս. Աղաբաբյան, Դեպի աղբյուրը լույսի Ե. 1979թ. , էջ 218